ՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՐԻՔՆԵՐԻ ՀԱՄԱՐ ԱՊՐԱՆՔԻ ՄԱՏԱԿԱՐԱՐՄԱՆ ՊԱՅՄԱՆԱԳԻՐ
N ՀՀՎԱ-ՄԱԱՊՁԲ-22/192

ք. Երևան «20» դեկտեմբերի 2022թ.

Վարչապետի աշխատակազմն, ի դեմս վարչապետի աշխատակազմի գործերի կառավարիչ Գարիկ Բոշյանի, որը գործում է աշխատակազմի կանոնադրության հիման վրա, այսուհետ «Գնորդ», մի կողմից, և «Օրենսդրության կարգավորման ազգային կենտրոն» հիմնադրամը, ի դեմս սնանկության գործով կառավարիչ Շաքե Ղազարյանի (ՆՔ 005767637, ՀԾՀ 7205880866, ՀՀ սնանկության դատարանի 07.04.2022թ. որոշում), այսուհետ «Վաճառող» մյուս կողմից, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության սնանկության դատարանի թիվ ՍՆԴ/2646/04/21 սնանկության գործի շրջանակներում 01.12.2022թ. կայացված «Գույքն ուղղակի գործարքով վաճառելու մասին» որոշումը և ՀՀ կառավարության 04.05.2017թ. թիվ 526-Ն որոշմամբ հաստատված կարգի 23-րդ կետի 4-րդ ենթակետի 22-րդ տողը կնքեցին սույն պայմանագիրը հետևյալի մասին:

1. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԱՌԱՐԿԱՆ

1.1. Վաճառողը պարտավորվում է սույն պայմանագրով (այսուհետ՝ պայմանագիր) սահմանված կարգով, ծավալներով, ժամկետներում և հասցեով Գնորդին մատակարարել պայմանագրի N 1 հավելվածով՝ Տեխնիկական բնութագիր-գնման-ժամանակացուցով նախատեսված ապրանքը (այսուհետ՝ ապրանք), իսկ Գնորդը պարտավորվում է ընդունել ապրանքը և վճարել դրա համար:

2. ԿՈՂՄԵՐԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԸ ԵՎ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

2.1 Գնորդն իրավունք ունի՝

2.1.1 Ապրանքը պայմանագրով սահմանված ժամկետում Վաճառողի կողմից չմատակարարելու դեպքում հրաժարվել ապրանքից, եթե մատակարարման ժամկետները խախտվել են 5 օրից ավելի:

2.1.2 Եթե հանձնվել է անպատշաճ որակի՝ պայմանագրով նախատեսված տեխնիկական բնութագրին չհամապատասխանող ապրանք՝

ա) պահանջել հատուցելու ապրանքի անպատշաճ որակի լինելու պատճառով իր կատարած ծախսերը.

բ) չընդունել ապրանքն՝ իր հայեցողությամբ սահմանելով անպատշաճ որակի ապրանքը պայմանագրին համապատասխանող որակի ապրանքով անհատույց փոխարինման ողջամիտ ժամկետ և պահանջել Վաճառողից վճարելու պայմանագրի 6.3 կետով նախատեսված տուգանքը.

գ) հրաժարվել պայմանագիրը կատարելուց և պահանջել վերադարձնելու ապրանքի համար վճարված գումարը:

2.1.3 Եթե հանձնվել է պայմանագրով որոշվածից պակաս քանակի ապրանք, ապա՝

ա) պահանջել լրացնելու ապրանքի պակաս հանձնված քանակը,

բ) հրաժարվել հանձնված ապրանքից և դրա համար վճարելուց, իսկ եթե ապրանքի համար վճարվել է, ապա պահանջել վերադարձնելու վճարված գումարը և վճարելու պայմանագրի 6.2 կետով նախատեսված տույժը:

2.1.4 Եթե հանձնվել է տեսակի պայմանի խախտմամբ ապրանք, իր ընտրությամբ՝

ա) ընդունել տեսակի վերաբերյալ պայմանին համապատասխանող ապրանքը և հրաժարվել մնացած ապրանքներից.

բ) հրաժարվել հանձնված բոլոր ապրանքներից և պահանջել վճարելու պայմանագրի 6.2 կետով նախատեսված տույժը.

գ) պահանջել տեսակի վերաբերյալ պայմանին չհամապատասխանող ապրանքի անհատույց փոխարինում պայմանագրով նախատեսված տեսակին համապատասխան ապրանքով:

2.1.5 Վաճառողի կողմից մատակարարման ժամկետների խախտման դեպքում իր հայեցողությամբ սահմանել ապրանքի մատակարարման նոր ժամկետ և պահանջել Վաճառողից վճարելու պայմանագրի 6.2 կետով նախատեսված տույժը:

2.1.6 Վաճառողից պահանջել հատուցելու վնասները, եթե Գնորդը Վաճառողի կողմից պարտավորությունը խախտելու հետևանքով պայմանագրի լուծումից հետո ողջամիտ ժամկետում այլ անձից ավելի բարձր, սակայն ողջամիտ գնով գնել է ապրանք՝ պայմանագրով նախատեսվածի փոխարեն՝ պայմանագրով սահմանված և դրա փոխարեն կնքված գործարքի գների միջև տարբերության չափով, ինչպես նաև ապրանքն այլ անձից ձեռք բերելու համար իր կատարած բոլոր անհրաժեշտ և ողջամիտ ծախսերը:

2.1.7 Միակողմանի լուծել պայմանագիրը (լրիվ կամ մասնակի), եթե Վաճառողն էականորեն խախտել է պայմանագիրը.

2.1.7.1 Վաճառողի կողմից պայմանագիրը խախտելն էական է համարվում, եթե՝

ա) մատակարարվել է անպատշաճ որակի ապրանք որը չի կարող փոխարինվել Գնորդի համար ընդունելի ժամկետում.

բ) ապրանքի մատակարարման ժամկետները խախտվել են 5 օրից ավելի,

2.1.8 Զննել ապրանքը և հայտնաբերված թերությունների մասին անհապաղ տեղեկացնել Վաճառողին:

2.2 Գնորդը պարտավոր է՝

2.2.1 Կատարել պայմանագրին համապատասխան մատակարարված ապրանքի ընդունումն ապահովող բոլոր անհրաժեշտ գործողությունները:

2.2.2 Վաճառողի հանձնած ապրանքից պայմանագրին համապատասխան հրաժարվելու դեպքում, ապահովել այդ ապրանքի պատասխանատու պահպանությունը և դրա մասին անհապաղ տեղեկացնել Վաճառողին:

2.2.3 Պայմանագրով նախատեսված կարգով և ժամկետներում մատակարարված ապրանքն ընդունելու դեպքում Վաճառողին վճարել վերջինիս վճարման ենթակա գումարները, իսկ վճարման ժամկետի խախտման դեպքում՝ նաև պայմանագրի 6.5 կետով նախատեսված տույժը:

2.2.4 Ապրանքի քանակի, տեսականու, որակի մասին պայմանագրի պայմանները խախտելու մասին Վաճառողին ծանուցել թերությունը հայտնաբերելուց հետո անմիջապես կամ այն բանից հետո՝ ողջամիտ ժամկետում, երբ պայմանագրի համապատասխան պայմանի խախտումը պետք է հայտնաբերված լիներ՝ ելնելով ապրանքի բնույթից և նշանակությունից:

2.2.5 Պայմանագրի 2.3.3 կետի համաձայն պայմանագրի լուծումից հետո Վաճառողին հատուցել վերջինիս պատճառված և սահմանված կարգով հիմնավորված վնասները:

2.3 Վաճառողն իրավունք ունի՝

2.3.1 Գնորդից պահանջել ընդունելու պայմանագրով նախատեսված կարգով, ծավալներով, ժամկետներում և հասցեով մատակարարված ապրանքը:

2.3.2 Գնորդից պահանջել վճարելու պայմանագրով նախատեսված կարգով, ծավալներով, ժամկետներում և հասցեով մատակարարված և Գնորդի կողմից ընդունված ապրանքի համար իրեն վճարման ենթակա գումարները:

2.3.3 Միակողմանի լուծել պայմանագիրը (լրիվ կամ մասնակի), եթե Գնորդն էականորեն խախտել է պայմանագիրը:

2.3.3.1 Գնորդի կողմից պայմանագիրը խախտելն էական է համարվում, եթե բազմիցս խախտվել են ապրանքի համար վճարելու ժամկետները:

2.3.4 Գնորդի համաձայնությամբ վաղաժամկետ մատակարարել ապրանքը:

2.4 Վաճառողը պարտավոր է՝

2.4.1 Գնորդին հանձնել ապրանքը՝ պայմանագրով նախատեսված կարգով, ծավալներով, ժամկետներում և հասցեով:

2.4.2 Ապահովել ապրանքի մատակարարումը պայմանագրի 2.1.2 կետի բ) ենթակետին և (կամ) 2.1.5 կետին համապատասխան՝ Գնորդի կողմից սահմանված ժամկետներում:

2.4.3 Գնորդին հանձնել երրորդ անձանց իրավունքներից ազատ ապրանք:

2.4.5 Գնորդին հանձնել պայմանագրով նախատեսված որակի և քանակի ապրանք՝ պայմանագրով նախատեսված ժամկետներում և հասցեով, իսկ Գնորդի պահանջով տրամադրել ապրանքի որակը հավաստող՝ ՀՀ օրենսդրությամբ սահմանված փաստաթղթեր:

2.4.6 Թերի մատակարարում թույլ տալու դեպքում, պայմանագրով նախատեսված կարգով, լրացնել թերի մատակարարվածը:

2.4.7 Հետ տանել Գնորդի կողմից պայմանագրի 2.2.2 կետին համապատասխան՝ պատասխանատու պահպանության ընդունված ապրանքը կամ ողջամիտ ժամկետում տնօրինել այն, ինչպես նաև հատուցել ապրանքը պատասխանատու պահպանության ընդունելու, այն իրացնելու կամ Վաճառողին վերադարձնելու հետ կապված անհրաժեշտ ծախսերը:

2.4.8 Պայմանագրով նախատեսված դեպքերում վճարել պայմանագրի 6.2 և 6.3 կետերով նախատեսված տույժը և տուգանքը:

2.4.9 Գնորդին հանձնել ապրանքի պատկանելիքները և համապատասխան փաստաթղթերը:

2.4.10 Պայմանագրի 2.1.7 կետի համաձայն պայմանագրի լուծումից հետո Գնորդին հատուցել վերջինիս պատճառված և սահմանված կարգով հիմնավորված վնասները:

2.4.11 Որակավորման և պայմանագրի ապահովում ներկայացրած անձը պարտավոր է ապահովումների գործողության ընթացքում լուծարման կամ սնանկացման գործընթաց սկսելու դեպքում դրա մասին նախապես գրավոր տեղեկացնել Գնորդին:

3. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԳԻՆԸ ԵՎ ՎՃԱՐՄԱՆ ԿԱՐԳԸ

3.1 Պայմանագրի գինը կազմում է 4 473 505 /չորս միլիոն չորս հարյուր յոթանասուներեք հազար հինգ հարյուր հինգ/ ՀՀ դրամ: Պայմանագրի գինը ներառում է պայմանագրի կատարումն ապահովելու նպատակով Վաճառողի կողմից կատարվելիք բոլոր վճարները (ծախսերը), այդ թվում՝ հարկերը, տուրքերը, փոխադրման, ապահովագրման ծախսերը, պարգևավճարները և ակնկալվող շահույթը:

Ապրանքի մատակարարման գինը կայուն է և Վաճառողն իրավունք չունի պահանջել ավելացնելու, իսկ Գնորդը նվազեցնելու այդ գինը:

3.2 Գնորդն իրեն մատակարարված ապրանքի դիմաց վճարում է ՀՀ դրամով անկանխիկ՝ դրամական միջոցները Վաճառողի հաշվարկային հաշվին փոխանցելու միջոցով: Դրամական միջոցների փոխանցումը կատարվում է հանձման-ընդունման արձանագրության հիման վրա՝ պայմանագրի վճարման ժամանակացույցով (հավելված N 2) նախատեսված ամիներին, բայց ոչ ուշ, քան մինչև տվյալ տարվա դեկտեմբերի 30-ը:

Ընդ որում վճարում կատարելու նպատակով հանձնման-ընդունման արձանագրությունն ստորագրվելու օրվանից հետո 3 աշխատանքային օրվա ընթացքում գնորդը վճարման հանձնարարագիրը և հանձնման-ընդունման արձանագրության պատճենը մուտքագրում է լիազորված մարմնի գանձապետական համակարգ, իսկ սահմանված կարգի համաձայն ներկայացված փաստաթղթերի հիման վրա լիազորված մարմինը տվյալ վճարումը կատարում է հանձնման-ընդունման արձանագրությունը գանձապետական համակարգ մուտքագրված լինելու դեպքում՝ սույն պայմանագրի վճարման ժամանակացույցով սահմանված ժամկետներում, հինգ աշխատանքային օրվա ընթացքում:

4. ԱՊՐԱՆՔԻ ՈՐԱԿԸ ԵՎ ԵՐԱՇԽԻՔԸ

4.1 Վաճառողը երաշխավորում է մատակարարված ապրանքի որակի համապատասխանությունը պետական ստանդարտի պահանջներին:

5. ԱՊՐԱՆՔԻ ՀԱՆՁՆՈՒՄԸ ԵՎ ԸՆԴՈՒՆՈՒՄԸ

5.1 Մատակարարված ապրանքն ընդունվում է Գնորդի և Վաճառողի միջև հանձնման-ընդունման արձանագրության ստորագրմամբ: Ապրանքը Գնորդին հանձնելու փաստը ֆիքսվում է Գնորդի և Վաճառողի միջև երկկողմ հաստատված փաստաթղթով՝ նշելով փաստաթղթի կազմման ամսաթիվը:

Մինչև պայմանագրով ապրանքի մատակարարման համար նախատեսված օրը ներառյալ Վաճառողը Գնորդին է տրամադրում իր կողմից ստորագրված՝ ապրանքը Գնորդին հանձնելու փաստը ֆիքսող փաստաթուղթը (հավելված N 3.1) և հանձնման-ընդունման արձանագրության <u>երկու</u> օրինակ (հավելված N 3):

5.2 Հանձնման-ընդունման արձանագրությունը ստորագրվում է, եթե մատակարարված ապրանքը համապատասխանում է պայմանագրի պայմաններին: Հակառակ դեպքում պայմանագրի կամ դրա մի մասի կատարման արդյունքները չեն ընդունվում, հանձնման-ընդունման արձանագրությունը չի ստորագրվում և Գնորդը՝

ա) հարցի կարգավորման համար ձեռնարկում է նման իրավիճակի համար պայմանագրով նախատեսված միջոցները.

բ) Վաճառողի նկատմամբ կիրառում է պայմանագրով նախատեսված պատասխանատվության միջոցներ:

5.3 Գնորդը հանձնման-ընդունման արձանագրությունը ստանալու օրվան հաջորդող աշխատանքային օրվանից հաշված <u>հինգ</u> աշխատանքային օրվա ընթացքում Վաճառողին է ներկայացնում իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրության մեկ օրինակը կամ ապրանքը չընդունելու պատճառաբանված մերժումը:

5.4 Եթե պայմանագրի 5.3 կետով սահմանված ժամկետում Գնորդը չի ընդունում մատակարարված ապրանքը կամ չի մերժում դրա ընդունումը, ապա մատակարարված ապրանքը համարվում է ընդունված և պայմանագրի 5.3 կետով սահմանված վերջնաժամկետին հաջորդող աշխատանքային օրը Գնորդը Վաճառողին է տրամադրում իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրությունը:

6. ԿՈՂՄԵՐԻ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅՈՒՆԸ

6.1 Վաճառողը պատասխանատվություն է կրում հանձնած ապրանքի որակի և պայմանագրով նախատեսված մատակարարման ժամկետների պահպանման համար:

6.2 Վաճառողի կողմից պայմանագրով նախատեսված ապրանքի մատակարարման ժամկետների խախտման դեպքում Վաճառողից յուրաքանչյուր ուշացված աշխատանքային օրվա համար գանձվում է տույժ՝ մատակարարման ենթակա, սակայն չմատակարարված ապրանքի գնի 0,05 (զրո ամբողջ հինգ հարյուրերորդական) տոկոսի չափով:

6.3 Պայմանագրի 1.1 կետում նշված տեխնիկական բնութագրին չհամապատասխանող ապրանք մատակարարելու յուրաքանչյուր դեպքում Վաճառողից գանձվում է տուգանք՝ պայմանագրի գնի 0,5 (զրո ամբողջ հինգ տասնորդական) տոկոսի չափով: Ընդ որում տուգանքը հաշվարկվում է նաև ապրանքի մատակարարումը սույն պայմանագրով սահմանված ժամկետում կատարելու, սակայն պատվիրատուի կողմից այդ չընդունվելու դեպքում:

6.4 Պայմանագրի 6.2 և 6.3 կետերով նախատեսված տույժը և տուգանքը հաշվարկվում և հաշվանցվում են Վաճառողին վճարման ենթակա գումարների հետ:

6.5 Գնորդի կողմից պայմանագրի 3.3 կետով նախատեսված ժամկետի խախտման համար Գնորդի նկատմամբ յուրաքանչյուր ուշացված աշխատանքային օրվա համար հաշվարկվում է տույժ՝ վճարման ենթակա, սակայն չվճարված գումարի 0,05 (զրո ամբողջ հինգ հարյուրերորդական) տոկոսի չափով:

6.6 Պայմանագրով չնախատեսված դեպքերում կողմերն իրենց պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու համար պատասխանատվություն են կրում ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով:

6.7 Տույժերի և (կամ) տուգանքի վճարումը Կողմերին չի ազատում իրենց պայմանագրային պարտվորությունները լրիվ կատարելուց:

7. ԱՆՀԱՂԹԱՀԱՐԵԼԻ ՈՒԺԻ ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆԸ (ՖՈՐՍ-ՄԱԺՈՐ)

Պայմանագրով պարտավորություններն ամբողջությամբ կամ մասնակիորեն չկատարելու համար կողմերն ազատվում են պատասխանատվությունից, եթե դա եղել է անհաղթահարելի ուժի ազդեցության հետևանքով, որը ծագել է սույն պայմանագիրը կնքելուց հետո, և որը կողմերը չէին կարող կանխատեսել կամ կանխարգելել: Այդպիսի իրավիճակներ են երկրաշարժը, ջրհեղեղը, հրդեհը, պատերազմը, ռազմական և արտակարգ դրություն հայտարարելը, քաղաքական հուզումները, գործադուլները, հաղորդակցության միջոցների աշխատանքի դադարեցումը, պետական մարմինների ակտերը և այլն, որոնք անհնարին են դարձնում սույն պայմանագրով պարտավորությունների կատարումը: Եթե արտակարգ ուժի ազդեցությունը շարունակվում է 3 (երեք) ամսից ավելի, ապա կողմերից յուրաքանչյուրն իրավունք ունի լուծել պայմանագիրը՝ այդ մասին նախապես տեղյակ պահելով մյուս կողմին:

8. ԱՅԼ ՊԱՅՄԱՆՆԵՐ

8.1 Պայմանագիրն ուժի մեջ է մտնում Կողմերի ստորագրման պահից և գործում է մինչև կողմերի՝ պայմանագրով ստանձնած պարտավորությունների ողջ ծավալով կատարումը:

Պայմանագրով նախատեսված կողմերի իրավունքների և պարտականությունների կատարման պայման է հանդիսանում պայմանագիրը ՀՀ ֆինանսների նախարարության կողմից հաշվառված լինելու հանգամանքը:

8.2 Պայմանագրից ծագած՝ կողմի վճարային պարտավորությունը չի կարող դադարել այլ պայմանագրից ծագած՝ հակընդդեմ պարտավորության հաշվանցով, առանց կողմերի գրավոր և կնիքով հաստատված համաձայնության: Պայմանագրից ծագած պահանջի իրավունքը չի կարող փոխանցվել այլ անձի, առանց պարտապան կողմի գրավոր համաձայնության:

8.3 Այն դեպքում, երբ օրենքով նախատեսված կարգով օրենքի պահանջների կատարման նկատմամբ հսկողության կամ վերահսկողության կամ բողոքների քննության արդյունքում արձանագրվում է, որ պայմանագիրը կնքելու նատակով կազմակերպված գնման գործընթացում, մինչև պայմանագրի կնքումը, Վաճառողը ներկայացրել է կեղծ փաստաթղթեր (տեղեկություններ և տվյալներ), կամ վերջինիս ընտրված մասնակից ճանաչելու մասին որոշումը չի համապատասխանում Հայաստանի Հանրապետության օրենսդրությանը, ապա այդ հիմքերն ի հայտ գալուց հետո Գնորդը միակողմանիորեն լուծում է պայմանագիրը, եթե արձանագրված խախտումները մինչև պայմանագրի կնքումը հայտնի լինելու դեպքում գնումների մասին Հայաստանի Հանրապետության օրենսդրության համաձայն հիմք կհանդիսանային պայմանագիրը չկնքելու համար: Ընդ որում, Գնորդը չի կրում պայմանագրի միակողմանի լուծման հետևանքով Վաճառողի համար առաջացող վնասների կամ բաց թողնված օգուտի ռիսկը, իսկ վերջինս պարտավոր է Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված կարգով փոխհատուցել իր մեղքով Գնորդի կրած վնասներն այն ծավալով, որի մասով պայմանագիրը լուծվել է:

8.4 Պայմանագրի հետ կապված վեճերը ենթակա են քննության Հայաստանի Հանրապետության դատարաններում:

8.5 Պայմանագրում փոփոխություններ և լրացումներ կարող են կատարվել միայն Կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ համաձայնագիր կնքելու միջոցով, որը կհանդիսանա պայմանագրի անբաժանելի մասը:

Արգելվում է պայմանագրում, իսկ եթե պայմանագրի գինը գործոնային է, ապա նաև այդ պայմանագրին կից հաջորդող յուրաքանչյուր տարիներին կնքված համաձայնագրում կատարել այնպիսի փոփոխություններ, որոնք հանգեցնում են գնվող ապրանքի ծավալների կամ ձեռք բերվող ապրանքի միավորի գնի կամ պայմանագրի գնի արհեստական փոփոխման:

Պայմանագրի կողմերից անկախ գործոնների ազդեցությամբ պայմանագրի փոփոխման յուրաքանչյուր դեպք սահմանում է Հայաստանի Հանրապետության կառավարությունը:

8.6 Ապրանքի մատակարարման ժամկետը կարող է երկարաձգվել մինչև պայմանագրով այդ ժամկետը լրանալը՝ Վաճառողի առաջարկության առկայության դեպքում, պայմանով, որ Գնորդի մոտ չի վերացել ապրանքի օգտագործման պահանջը, իսկ Վաճառողի առաջարկությունը ներկայացվել է ոչ ուշ, քան պայմանագրով ի սկզբանե մատակարարման համար սահմանված ժամկետը լրանալուց առնվազն 5 օրացուցային օր առաջ: Ընդ որում սույն կետով սահմանված դեպքում ապրանքի մատակարարման ժամկետը

կարող է երկարաձգվել մեկ անգամ մինչև 30 օրացուցային օրով, բայց ոչ ավել քան պայմանագրով սահմանված ժամկետն է:

8.7 Պայմանագրի պատշաճ կատարման պայմաններում կողմերի (Վաճառող կամ Գնորդ) օգուտները (խնայողություններ) կամ կրած վնասները տվյալ կողմի օգուտը կամ կրած վնասն են:

Պայմանագրի կողմերի՝ երրորդ անձանց նկատմամբ պարտավորությունները՝ ներառյալ պայմանագրի կատարման շրջանակում Վաճառողի կնքած այլ գործարքները և դրանցից բխող պարտավորությունները, դուրս են պայմանագրի կարգավորման դաշտից և չեն կարող ազդել պայմանագրի կատարման արդյունքն ընդունելու վրա: Այդ գործարքների և դրանցից բխող պարտավորությունների կատարման հետ կապված հարաբերությունները կարգավորվում են այդ գործարքների հետ կապված հարաբերությունները կարգավորող նորմերով, և դրանց համար պատասխանատու է Վաճառողը:

8.8 Պայմանագիրը չի կարող փոփոխվել կողմերի պարտավորությունների մասնակի չկատարման հետևանքով կամ ամբողջությամբ լուծվել կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ բացառությամբ՝ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով ապրանքի մատակարարման համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցման դեպքերի: Ընդ որում, պայմանագրի կողմերի՝ պարտավորությունների մասնակի չկատարման կամ ամբողջությամբ լուծման կողմերի փոխադարձ համաձայնությունն անհրաժեշտ է ձեռք բերել նախքան Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով ապրանքի մատակարարման համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցումը:

8.9 Վաճառողի կողմից ստանձնած պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու հիմքով պայմանագիրն ամբողջությամբ կամ մասնակի միակողմանի լուծելու մասին ծանուցումը Գնորդը հրապարակում է www.procurement.am հասցեով գործող ինտերնետային կայքի «Պայմանագրերը միակողմանի լուծելու մասին ծանուցումներ» բաժնում՝ նշելով հրապարակման ամսաթիվը: Վաճառողը, պայմանագիրը միակողմանի լուծելու վերաբերյալ, համարվում է պատշաճ ծանուցված՝ ծանուցումը, սույն կետով սահմանված հրապարակվելուն հաջորդող օրվանից: Պայմանագիրն ամբողջությամբ կամ մասնակի միակողմանի լուծելու մասին ծանուցումը տեղեկագրում հրապարակվելու օրը Գնորդը այն ուղարկվում է նաև Վաճառողի էլեկտրոնային փոստին:

8.10 Պայմանագրի կապակցությամբ ծագած վեճերը լուծվում են բանակցությունների միջոցով: Համաձայնություն ձեռք չբերելու դեպքում վեճերը լուծվում են դատական կարգով:

8.11 Պայմանագիրը կազմված է 5 էջից, կնքվում է երկու օրինակից, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ, յուրաքանչյուր կողմին տրվում է մեկական օրինակ: Պայմանագրի N 1, N 2, N 3 և N 3.1 հավելվածները, համարվում են պայմանագրի անբաժանելի մասը:

8.12 Պայմանագրի հետ կապված հարաբերությունների նկատմամբ կիրառվում է Հայաստանի Հանրապետության իրավունքը:

9. Կողմերի հասցեները, բանկային վավերապայմանները և ստորագրությունները

ԳՆՈՐԴ	**ՎԱՃԱՌՈՂ**
Վարչապետի աշխատակազմ	«Օրենսդրության կարգավորման ազգային
Ք. Երևան, Հանրապետության հր.	կենտրոն» հիմնադրամը
Կառավարական տուն 1	Ք. Երևան, Սարյան 22
ՀՀ ՖՆ գործառնական վարչություն	ՀՎՀՀ 02647976
ՀՀ 900011022432	«Հայբիզնեսբանկ» ՓԲԸ
ՀՎՀՀ 02505554	Մնանկության հատուկ հաշվեհամար
	ՀՀ 1150020350910932
	Մնանկության գործով կառավարիչ
	Շաքե Ղազարյան
/ստորագրություն/	/ստորագրություն/
Կ.Տ	Կ.Տ

Հավելված N 1
«20» դեկտեմբերի 2022թ. կնքված
ՀՀՎԱ-ՄԱԱՊՁԲ-22/192 ծածկագրով պայմանագրի

ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԲՆՈՒԹԱԳԻՐ - ԳՆՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ*

ՀՀ դրամ

Ապրանքի											
հրավերով նախատեսված չափաբաժնի համարը	լոտ	գնումների պլանով նախատեսված միջանցիկ ծածկագիրը՝ ըստ ԳՄԱ դասակարգման (CPV)	անվանումը	տեխնիկական բնութագիրը	չափման միավորը	միավոր գինը/ՀՀ դրամ	ընդհանուր գինը/ՀՀ դրամ	ընդհանուր քանակը	մատակարարման		
									հասցեն	ենթակա քանակը	Ժամկետը***
1.	1	30211200/7	դյուրակիր համակարգիչներ	Նոութբուկ FUJITSU lifebook E751	հատ	150,000	150,000	1	ք.Երևան, Սարյան 22	1	Պայմանագիրը ուժի մեջ մտնելուց հետո մինչև 2022թ. դեկտեմբերի 25
2.	2	30211220/17	սեղանի համակարգիչներ	Համակարգիչ FUJITSU Esprimo P 400E85+, RAM 4.00 GB, Processor INTEL PENTIUM CPU G 620 2.60 GHz	հատ	80,000	80,000	1	ք.Երևան, Սարյան 22	1	Պայմանագիրը ուժի մեջ մտնելուց հետո մինչև 2022թ. դեկտեմբերի 25
3.	3	30237490/1	համակարգչային մոնիտոր	Մոնիթոր FUJITSU L22T 3, ստեղնաշար, մուկ	հատ	25,000	25,000	1	ք.Երևան, Սարյան 22	1	Պայմանագիրը ուժի մեջ մտնելուց հետո մինչև 2022թ. դեկտեմբերի 25
4.	4	48821200/2	համակարգչային սերվերներ	ՍերվերFujitsu Primergy TX300 S6, RJ 45 միակցիչներ 200 հատ, Ցանցային մալուխ միացման տուփ 30հատ, UTP տեսակի մալուխ6305մետր*3տուփ,	հատ	625,500	625,500	1	ք.Երևան, Սարյան 22	1	Պայմանագիրը ուժի մեջ մտնելուց հետո մինչև 2022թ. դեկտեմբերի 25

				Մալուխի խողովակ30տուփ*203մետր , Մալուխի խողովակ 10տուփ*303մետր							
5.	5	31211300/1	կոմուտատորներ	Ոչ կառավարելի կոմուտատոր D Link DGS 1008D	հատ	4,000	4,000	1	ք.Երևան, Սարյան 22	1	Պայմանագիրը ուժի մեջ մտնելուց հետո մինչև 2022թ. դեկտեմբերի 25
6.	7-10	30232231/7	համակարգչի կոշտ սկավառակ	Արտաքին կոշտ սկավառակ verbatin	հատ	10,000	40,000	4	ք.Երևան, Սարյան 22	4	Պայմանագիրը ուժի մեջ մտնելուց հետո մինչև 2022թ. դեկտեմբերի 25
7.	11	39714200/5	օդորակիչ	Օդորակիչ BOSCH BIZMA/124602	հատ	90,000	90,000	1	ք.Երևան, Սարյան 22	1	Պայմանագիրը ուժի մեջ մտնելուց հետո մինչև 2022թ. դեկտեմբերի 25
8.	12-24	39714200/6	օդորակիչ	Օդորակիչ BOSCH BIZMA/112602	հատ	50,000	650,000	13	ք.Երևան, Սարյան 22	13	Պայմանագիրը ուժի մեջ մտնելուց հետո մինչև 2022թ. դեկտեմբերի 25
9.	25	39121200/1	սեղաններ	Խորհրդակցության սեղան 6000*1500*750	հատ	40,000	40,000	1	ք.Երևան, Սարյան 22	1	Պայմանագիրը ուժի մեջ մտնելուց հետո մինչև 2022թ. դեկտեմբերի 25
10.	26-44	39121520/3	Գրապահարան-ներ	Գրապահարան 800*420*2000	հատ	15,000	285,000	19	ք.Երևան, Սարյան 22	19	Պայմանագիրը ուժի մեջ մտնելուց հետո մինչև 2022թ. դեկտեմբերի 25
11.	46-47	39111220/11	բազկաթոռ՝ ղեկավարի	Ղեկավարի բազկաթոռ 660*760*1150 1220	հատ	20,000	40,000	2	ք.Երևան, Սարյան 22	2	Պայմանագիրը ուժի մեջ մտնելուց հետո մինչև 2022թ. դեկտեմբերի 25
12.	48-49	39111220/12	բազկաթոռ՝ ղեկավարի	Ղեկավարի բազկաթոռ 650*700*1000 1130	հատ	18,000	36,000	2	ք.Երևան, Սարյան 22	2	Պայմանագիրը ուժի մեջ մտնելուց հետո մինչև 2022թ. դեկտեմբերի 25

13.	50-52	39111140/1	աթոռներ	Աթոռ DC 535*580*830	հատ	2,000	6,000	3	ք.Երևան, Սարյան 22	3	Պայմանագիրը ուժի մեջ մտնելուց հետո մինչև 2022թ. դեկտեմբերի 25
14.	53	39121420/1	կցասեղան՝ պահարանիկով (դարակով)	Ղեկավարի գրասեղանի կցորդ 2100*920*750	հատ	15,000	15,000	1	ք.Երևան, Սարյան 22	1	Պայմանագիրը ուժի մեջ մտնելուց հետո մինչև 2022թ. դեկտեմբերի 25
15.	54	39121420/2	կցասեղան՝ պահարանիկով (դարակով)	Ղեկավարի գրասեղանի կցորդ 1900*900*750	հատ	15,000	15,000	1	ք.Երևան, Սարյան 22	1	Պայմանագիրը ուժի մեջ մտնելուց հետո մինչև 2022թ. դեկտեմբերի 25
16.	55-56	39121420/3	կցասեղան՝ պահարանիկով (դարակով)	Ղեկավարի գրասեղանի կցորդ 1800*900*750	հատ	15,000	30,000	2	ք.Երևան, Սարյան 22	2	Պայմանագիրը ուժի մեջ մտնելուց հետո մինչև 2022թ. դեկտեմբերի 25
17.	57-60	39121420/4	կցասեղան՝ պահարանիկով (դարակով)	Ղեկավարի սեղանի կցորդ 100*600*700	հատ	10,000	40,000	4	ք.Երևան, Սարյան 22	4	Պայմանագիրը ուժի մեջ մտնելուց հետո մինչև 2022թ. դեկտեմբերի 25
18.	61-62	39121320/1	սեղան՝ դիմադիր	Ղեկավարի սեղանի դիմադիր սեղան 1200*600*750	հատ	10,000	20,000	2	ք.Երևան, Սարյան 22	2	Պայմանագիրը ուժի մեջ մտնելուց հետո մինչև 2022թ. դեկտեմբերի 25
19.	66-87	39121100/4	գրասեղաններ	ԱՇԽԱՏԱՆՔԱՅԻՆ ՍԵՂԱՆ 1300*650*720	հատ	15,000	330,000	22	ք.Երևան, Սարյան 22	22	Պայմանագիրը ուժի մեջ մտնելուց հետո մինչև 2022թ. դեկտեմբերի 25
20.	95	39121200/2	սեղաններ	Սեղան 1300*650*750	հատ	10,000	10,000	1	ք.Երևան, Սարյան 22	1	Պայմանագիրը ուժի մեջ մտնելուց հետո մինչև 2022թ. դեկտեմբերի 25
21.	102-113	39121520/4	գրապահարաններ	Պահարան 900*420*2000	հատ	20,000	240,000	12	ք.Երևան, Սարյան 22	12	Պայմանագիրը ուժի մեջ մտնելուց հետո մինչև 2022թ. դեկտեմբերի 25

22.	114-115	44421300/5	չիրկիզվող պահարաններ	Սեյֆ 410*500*350	հատ	80,000	160,000	2	ք.Երևան, Սարյան 22	2	Պայմանագիրը ուժի մեջ մտնելուց հետո մինչև 2022թ. դեկտեմբերի 25
23.	116	39515450/1	հորիզոնական շերտավարագույր	Շերտավարագույր հորիզոնական 130քառ.մ	քառ.մ	1,538.5	200,005	130	ք.Երևան, Սարյան 22	130	Պայմանագիրը ուժի մեջ մտնելուց հետո մինչև 2022թ. դեկտեմբերի 25
24.	117	39151300/1	փափուկ կահույք	Բազմոցների հավաքածու 1680*900*900,840*900*900 2 բազկաթոռ և մեկ բազմոց	լրակազմ	150,000	150,000	1	ք.Երևան, Սարյան 22	1	Պայմանագիրը ուժի մեջ մտնելուց հետո մինչև 2022թ. դեկտեմբերի 25
25.	118	39151300/2	փափուկ կահույք	Բազմոցների հավաքածու 2520*900*900,840*900*900 2բազկաթոռ և մեկ բազմոց	լրակազմ	200,000	200,000	1	ք.Երևան, Սարյան 22	1	Պայմանագիրը ուժի մեջ մտնելուց հետո մինչև 2022թ. դեկտեմբերի 25
26.	119	39151300/3	փափուկ կահույք	Բազմոցների հավաքածու 2520*900*900,840*900*900 2բազկաթոռ և մեկ բազմոց	լրակազմ	200,000	200,000	1	ք.Երևան, Սարյան 22	1	Պայմանագիրը ուժի մեջ մտնելուց հետո մինչև 2022թ. դեկտեմբերի 25
27.	120-122	39121400/2	լրագրասեղան	լրագրասեղան 1200*600*450	հատ	25,000	75,000	3	ք.Երևան, Սարյան 22	3	Պայմանագիրը ուժի մեջ մտնելուց հետո մինչև 2022թ. դեկտեմբերի 25
28.	123	39132220/1	կախիչներ	կախիչ հատակադիր	հատ	2,000	2,000	1	ք.Երևան, Սարյան 22	1	Պայմանագիրը ուժի մեջ մտնելուց հետո մինչև 2022թ. դեկտեմբերի 25
29.	124	39711140/2	կենցաղային սառնարաններ	սառնարան Indesit NTS 14AA/UA/	հատ	100,000	100,000	1	ք.Երևան, Սարյան 22	1	Պայմանագիրը ուժի մեջ մտնելուց հետո մինչև 2022թ. դեկտեմբերի 25
30.	125-138	39111140/2	աթոռներ	ԱթոռDC	հատ	15,000	210,000	14	ք.Երևան, Սարյան 22	14	Պայմանագիրը ուժի մեջ մտնելուց հետո մինչև 2022թ. դեկտեմբերի 25

31.	139-165	39121420/5	կցասեղան՝ պահարանիկով (դարակով)	Երեք դարակով սեղանի կողադիր	հատ	15,000	405,000	27	ք.Երևան, Սարյան 22	27	Պայմանագիրը ուժի մեջ մտնելուց հետո մինչև 2022թ. դեկտեմբերի 25
Ընդամենը՝							4473505				

**Մատակարարման վերջնաժամկետը չի կարող ավել լինել, քան տվյալ տարվա դեկտեմբերի 25-ը:*

ԳՆՈՐԴ

Վարչապետի աշխատակազմ
Ք. Երևան, Հանրապետության հր.
Կառավարական տուն 1
ՀՀ ՖՆ գործառնական վարչություն
ՀՀ 900011022432
ՀՎՀՀ 02505554

/ստորագրություն/
Կ.Տ

ՎԱՃԱՌՈՂ

«Օրենսդրության կարգավորման ազգային կենտրոն» հիմնադրամը
Ք. Երևան, Սարյան 22
ՀՎՀՀ 02647976
«Հայբիզնեսբանկ» ՓԲԸ
Սնանկության հատուկ հաշվեհամար
ՀՀ 1150020350910932
Սնանկության գործով կառավարիչ
Շաքե Ղազարյան

/ստորագրություն/
Կ.Տ

Հավելված N 2
«20» դեկտեմբերի 2022թ. կնքված
ՀՀՎԱ-ՄԱԱՊՁԲ-22/192 ծածկագրով պայմանագրի

ՎՃԱՐՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ*

ՀՀ դրամ

Ապրանքի															
հրավերով նախատեսված չափաբաժնի համարը	գնումների պլանով նախատեսված միջանցիկ ծածկագիրը՝ ըստ ԳՄԱ դասակարգման (CPV)	անվանումը	դիմաց վճարումները նախատեսվում է իրականացնել 2022թ-ին՝ ըստ ամիսների, այդ թվում												
			հունվար	փետրվար	մարտ	ապրիլ	մայիս	հունիս	հուլիս	օգոստոս	սեպտեմբեր	հոկտեմբեր	նոյեմբեր	դեկտեմբեր	Ընդամենը
1	30211200/7	դյուրակիր համակարգիչներ	-	-	-	-	-	-	-	-	-	-	-	150,000	150,000
2	30211220/17	սեղանի համակարգիչներ	-	-	-	-	-	-	-	-	-	-	-	80,000	80,000
3	30237490/1	համակարգչային մոնիտոր	-	-	-	-	-	-	-	-	-	-	-	25,000	25,000
4	48821200/2	համակարգչային սերվերներ	-	-	-	-	-	-	-	-	-	-	-	625,500	625,500
5	31211300/1	կոմուտատորներ	-	-	-	-	-	-	-	-	-	-	-	4,000	4,000
6	30232231/7	համակարգչի կոշտ սկավառակ	-	-	-	-	-	-	-	-	-	-	-	40,000	40,000
7	39714200/5	օդորակիչ	-	-	-	-	-	-	-	-	-	-	-	90,000	90,000
8	39714200/6	օդորակիչ	-	-	-	-	-	-	-	-	-	-	-	650,000	650,000
9	39121200/1	սեղաններ	-	-	-	-	-	-	-	-	-	-	-	40,000	40,000
10	39121520/3	Գրապահարան-ներ	-	-	-	-	-	-	-	-	-	-	-	285,000	285,000
11	39111220/11	բազկաթոռ՝ ղեկավարի	-	-	-	-	-	-	-	-	-	-	-	40,000	40,000
12	39111220/12	բազկաթոռ՝ ղեկավարի	-	-	-	-	-	-	-	-	-	-	-	36,000	36,000
13	39111140/1	աթոռներ	-	-	-	-	-	-	-	-	-	-	-	6,000	6,000
14	39121420/1	կցասեղան՝ պահարանիկով (դարակով)	-	-	-	-	-	-	-	-	-	-	-	15,000	15,000
15	39121420/2	կցասեղան՝ պահարանիկով (դարակով)	-	-	-	-	-	-	-	-	-	-	-	15,000	15,000
16	39121420/3	կցասեղան՝ պահարանիկով (դարակով)	-	-	-	-	-	-	-	-	-	-	-	30,000	30,000

17	39121420/4	կցասեղան՝ պահարանիկով (դարակով)	-	-	-	-	-	-	-	-	-	-	-	40,000	40,000
18	39121320/1	սեղան՝ դիմադիր	-	-	-	-	-	-	-	-	-	-	-	20,000	20,000
19	39121100/4	գրասեղաններ	-	-	-	-	-	-	-	-	-	-	-	330,000	330,000
20	39121200/2	սեղաններ	-	-	-	-	-	-	-	-	-	-	-	10,000	10,000
21	39121520/4	գրապահարաններ	-	-	-	-	-	-	-	-	-	-	-	240,000	240,000
22	44421300/5	չհրկիզվող պահարաններ	-	-	-	-	-	-	-	-	-	-	-	160,000	160,000
23	39515450/1	հորիզոնական շերտավարագույր	-	-	-	-	-	-	-	-	-	-	-	200,005	200,005
24	39151300/1	փափուկ կահույք	-	-	-	-	-	-	-	-	-	-	-	150,000	150,000
25	39151300/2	փափուկ կահույք	-	-	-	-	-	-	-	-	-	-	-	200,000	200,000
26	39151300/3	փափուկ կահույք	-	-	-	-	-	-	-	-	-	-	-	200,000	200,000
27	39121400/2	լրագրասեղան	-	-	-	-	-	-	-	-	-	-	-	75,000	75,000
28	39132220/1	կախիչներ	-	-	-	-	-	-	-	-	-	-	-	2,000	2,000
29	39711140/2	կենցաղային սառնարաններ	-	-	-	-	-	-	-	-	-	-	-	100,000	100,000
30	39111140/2	աթոռներ	-	-	-	-	-	-	-	-	-	-	-	210,000	210,000
31	39121420/5	կցասեղան՝ պահարանիկով (դարակով)	-	-	-	-	-	-	-	-	-	-	-	405,000	405,000

* *Վճարման ենթակա գումարները ներկայացվում են աճողական կարգով:*

ԳՆՈՐԴ

Վարչապետի աշխատակազմ
Ք. Երևան, Հանրապետության հր.
Կառավարական տուն 1
ՀՀ ՖՆ գործառնական վարչություն
ՀՀ 900011022432
ՀՎՀՀ 02505554

/ստորագրություն/
Կ.Տ

ՎԱՃԱՌՈՂ

«Օրենսդրության կարգավորման ազգային կենտրոն» հիմնադրամը
Ք. Երևան, Սարյան 22
ՀՎՀՀ 02647976
«Հայբիզնեսբանկ» ՓԲԸ
Սնանկության հատուկ հաշվեհամար
ՀՀ 1150020350910932
Սնանկության գործով կառավարիչ
Շաքե Ղազարյան

/ստորագրություն/
Կ.Տ

Հավելված N 3
«20» դեկտեմբերի 2022թ. կնքված
ՀՀՎԱ-ՄԱԱՊՁԲ-22/192 ծածկագրով պայմանագրի

Պայմանագրի կողմ	Պատվիրատու
_____	_____
_____	_____
գտնվելու վայրը _____	գտնվելու վայրը _____
հհ _____	հհ_____
հվհհ _____	հվհհ_____

ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N
ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԿԱՄ ԴՐԱ ՄԻ ՄԱՍԻ ԿԱՏԱՐՄԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ՀԱՆՁՆՄԱՆ-ԸՆԴՈՒՆՄԱՆ

« » « » 20 թ.

Պայմանագրի /այսուհետ՝ Պայմանագիր/ անվանումը՝
_____

Պայմանագրի կնքման ամսաթիվը՝ «____» «_____» 20 թ.
Պայմանագրի համարը՝ _____
Պատվիրատուն և Պայմանագրի կողմը՝ հիմք ընդունելով պայմանագրի կատարման վերաբերյալ « » « » 20 թ. դուրս գրված N ___ հաշիվ ապրանքագիրը, կազմեցին սույն արձանագրությունը հետևյալի մասին.
Պայմանագրի շրջանակներում Պայմանագրի կողմը մատակարարել է հետևյալ ապրանքները՝

N	Մատակարարված ապրանքների							
	անվանումը	տեխնիկական բնութագրի համառոտ շարադրանքը	քանակական ցուցանիշը		կատարման ժամկետը		Վճարման ենթակա գումարը /հազար դրամ/	Վճարման ժամկետը /ըստ վճարման ժամանակացույցի/
			ըստ պայմանագրով հաստատված գնման ժամանակացույցի	փաստացի	ըստ պայմանագրով հաստատված գնման ժամանակացույցի	փաստացի		

Սույն արձանագրության երկկողմ հաստատման համար հիմք հանդիսացած հաշիվ ապրանքագիրը և դրական եզրակացությունը հանդիսանում են սույն արձանագրության բաղկացուցիչ մասը և կցվում են:

Ապրանքը հանձնեց	Ապրանքը ընդունեց
_____	_____
ստորագրություն	ստորագրություն
_____	_____
ազգանուն, անուն	ազգանուն, անուն
Կ.Տ.	Կ.Տ.

Հավելված 3.1
«20» դեկտեմբերի 2022թ. կնքված
ՀՀՎԱ-ՄԱԱՊՁԲ-22/192 ծածկագրով պայմանագրի

ԱԿՏ N _____
պայմանագրի արդյունքը Գնորդին հանձնելու փաստը ֆիքսելու վերաբերյալ

Սույնով արձանագրվում է, որ _____-ի (այսուհետ՝ Գնորդ) և _____
Գնորդի անվանումը Վաճառողի անվանումը
(այսուհետ՝ Վաճառող) միջև 20 թ. _____ -ին կնքված N _____
պայմանագրի կնքման ամսաթիվը պայմանագրի համարը
պայմանագրի շրջանակներում Վաճառողը 20 թ. _____-ին հանձնման-ընդունման նպատակով Գնորդին հանձնեց ստորև նշված ապրանքները.

Ապրանքի		
անվանումը	չափման միավորը	քանակը (փաստացի)

Սույն ակտը կազմված է 2 օրինակից, յուրաքանչյուր կողմին տրամադրվում է մեկական օրինակ:

ԿՈՂՄԵՐԸ

Հանձնեց

_____
ազգանուն, անուն

_____
Ստորագրություն

Ընդունեց
հայտը նախագծած ներկայացուցիչ՝

_____
ազգանուն, անուն

_____
ստորագրություն